ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ԼՈՒՍԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

17.12.2018թ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Լուսաշող համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Լուսաշող,
Lusashogh.ararat@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ 14

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 8 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով՝

Ավագանին որոշում է.

Հաստատել Արարատի մարզի Լուսաշող համայնքի ավագանու թիվ 8 նիստի օրակարգը.

1. 2019 թվականի համար տեղական տուրքեր և վճարների դրույքաչափերի սահմանելու մասին հարց:
2. Լուսաշող համայնքի 2019 թվականի բյուջեի քննարկումը և հաստատումը:
3. Համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակի հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի մասին հարցը:
4. Լուսաշող համայնքի 2018 թվականի բյուջեում փոփոխություն կատարելու մասին հարցը:

| Ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Արտաշես Արշակյան | | | |
| Անդրեասյան Մելքոն | | | |
| Հովհաննիսյան Մարգար | | | |
| Սանթրոսյան Նվարդ | | | |

ԼՈՒՍԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՍԱՖԱՐՅԱՆ

1. Լսեցին 2019 թվականի համար տեղական տուրքեր և վճարների դրուքաչափերի մասին սահմանելու հարցը:

Ղեկավարվելով <<տեղական տուրքերի և վճարների մասին>>ՀՀ օրենքի 11,12,13,14 հոդվածներով Լուսաշող համայնքի ավագանին որոշում է.

Լուսաշող համայքնում 2019 թվականին սահմանել տեղական տուրքերի հետևյալ դրույքաչափերը.

Հիմնական շենքերի և շինությունների համար

ա) մինչև 300քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի այդ թվում այգեգործական(ամառանոցային)տների ինչպես նաև մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող և հասարակական արտադրական նշանակության շենքերի և շինություններ համար 15000 դրամ:

բ)սույն կետի <<ա>>ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար 201-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող շենքների և շինությունների համար 30000դրամ:501-ից մինչև 1000քմ ընդհանուր մակերես ունեցող շենքների և շինությունների համար 50000 դրամ:1001-ից մինչև 3000քմ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար 100000 դրամ:

գ)ոչ հիմնական շենքերի և շինությունների համար մինչև 20քմ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար 3000դրամ:20 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար 5000 դրամ:

2. Լուսաշող համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման,վերականգնման,ուժեղացման,արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով

ա)չի նախատեսվում կառույցների,վերնակառույցների շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող (այդ թվում ստորգետնյա)օբյեկտների ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության համար 3000 դրամ:

բ)բացի շենքերի և շինությունների վերակառուցման ուժեղացման վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից նախատեսվում է նաև կցակառույցների,

վերնակառույցների շենքերի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների(այդ թվում ստորգետնյա)հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության կետի <<ա>>ենթակետով սահմանված դրույքաչափերը կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխությության մասով:

գ)նախատեսվում է միայն կառույցների,վերնակառույցների շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա)շինարարության կամ շենքերի գործառական նշանակության,ապա սույն օրենքի իմաստով,այն համարվում է նոր շինարարություն,որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը:

3. Լուսաշող համայնքի վարչական տարածքում շենքերի,շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման(բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի)թույլտվության համար 5000 դրամ:

4. Լուսաշող համայնքի տարածքում հողուկ վառելիքի սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար,օրացույցային տարվա համար 200000 դրամ:

5. Լուսաշող համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում,կրպակներում հեղուկ վառելիքի,սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար օրացույցային տարվա համար 60000 դրամ:

6. Լուսաշող համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առուվաճառք իրականացնելու թույլտվության համար օրացույցային տարվա համար 50000 դրամ:

7. Լուսաշող համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա)ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվության համար յուրաքանչյուր եռամսյակի համար մինչև 26քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 10000 դրամ:

Համայնքի ավագանին որոշեց կիրառել 0,5 գործակից և գին սահմանել 5000 դրամ:

26-ից մինչև 50քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում տաս հազար հինգ հարյուր դրամ:

51-ից մինչև 100քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 13500 դրամ:

101-ից մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 20500 դրամ:

201-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 25500 դրամ:

501 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 45500 դրամ:

բ)ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար յուրաքանչյուր համայնքի համար մինչև 26քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 10001 դրամ:

26-ից մինչև 50քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 10500 դրամ:

51-ից մինչև 100քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 13500 դրամ:

101-ից մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 20500 դրամ:

201-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 25500 դրամ:

501 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 45500 դրամ:

8.իրավաբանական անձանց և անհատ ձեռներեցներին համայնքի վարչական տարածքում <<Առևտրի և ծառայությունների մասին>>ՀՀ օրենքով սահմանված բացօթյա

առևտրի կազմակերպման թույլտվության համար յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ մեկ քմ-ի համար:

9. Լուսաշող համայնքի վարչական տարածքում առևտրի և հանրային սննդի,զվարճանքի,շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբեկտներին,խաղատներին և բաղնիքներին(սաունաներին)ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվության համար օրացույցային տարվա համար

ա)առևտրի օբեկտի համար ՝5000 դրամ

բ)հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝25000 դրամ

գ)բաղնիքների(սաունաների) համար՝ 200000դրամ

դ)խաղատների համար՝500000դրամ

ե)շահումով խաղերի համար՝ 250000դրամ

զ)վիճակախաղերի համար՝100000դրամ

10. Լուսաշող համայնքի վարչական տարածքում համայնքային կանոններին համապատասխան հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր համայնքի համար սահմանվում է

ա)հիմնական շինությունների ներսում՝

-մինչև 26քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 5000դրամ:

-26-ից մինչև 80քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 5500 դրամ:

-51-ից մինչև 100քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 10500 դրամ:

-101-ից մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 25500 դրամ:

-501-ից ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 30500 դրամ:

բ)ոչ հիմնական շինությունների ներսում մինչև 26քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբեկտի համար հազար դրամ:

26-ից մինչև 80 քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբեկտի համար 1500դրամ:

-51-ից մինչև 100քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբեկտի համար 2500դրամ:

-101-ից մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբեկտի համար 4500 դրամ:

201-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբեկտի համար 8500 դրամ:

-501 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբեկտի համար 15500դրամ:

-Աճուրդի մրցույթի մասնակցության համար սահմանել 5000դրամ:

-Աղբահանության վճար սահմանել 1 շնչին 60դրամ ամսական:

| Ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
| --- | --- | --- | --- |
| Արտաշես Արշակյան | [signature] | --------- | -------- |
| Անդրեասյան Մելքոն | [signature] | --------- | --------- |
| Հովհաննիսյան Մարգար | [signature] | ---------- | ---------- |
| Ստեփանյան Նելսոն | [signature] | ---------- | ---------- |

2. Լսեցին-Լուսաշող համայնքի 2019թ-ի բյուջեի քննարկումը և հաստատումը:

Համայնքի ղեկավարը ավագանուն ներկայացրեց բյուջեի եկամտային և ծախսային մասերը հետևյալ մանրամասներով:

Բյուջեի եկամտային մաս ընդամենը 15210,9

1. Հարկային եկամուտներ 3210,0 նույն թվում

ա)հողի հարկ 1858,0

նույն թվում՝

ֆիզիկական անձանցից 1858,0

բ)գույքահարկ 890,0

նույն թվում՝

ֆիզիկական անձանցից 862,0

իրավաբանական անձանցից 28,0

գ)տեղական տուրք 40,0

նույն թվում՝

ոգելից խմիչքների և ծխախոտի վաճառքի թույլտվության համար 40,0

աղբահանության վճար 432,0

նույն թվում՝

ֆիզիկական անձանցից 372,0

իրավաբանական անձանցից 60,0

2. Ոչ հարկային եկամուտներ 12000,9

Նույն թվում՝

ա)վարձակալական հողի վարձավճար 491, 0

3. Դոտացիա 11509,9

Համայնքի ղեկավարի ներկայացմամբ 2019թ.-ի բյուջեի ծախսային մասն ունի հետևյալ տեսքը.

Կառավարման ապարատի ծախսեր 10492,0

1. 4111. աշխատավարձ 8690,0

2. 4112. պարգևատրում 300,0

3. 4212. էլեկտրոէներգիա 150,0

4. 4212. փողոցների լուսավորություն 450,0

5. 4213. կոմունալ ծառայություն 432,0

6. 4214. ինտերնետ 102,0

7. 4221. ներքին գործուղում 200,0

8. 4232. համակարգչային ծառայություն 50,0

9. 4234. թերթեր 100,0

10. 4251. շենք-շին. ընթացիկ վերանորոգում 500,0

11. 4241. մասնագիտական ծառայություն 100,0

12. 4252. տրանսպորտային միջոցի պահպանում 200,0

13. 4261. գրասենյակային նյութեր 100,0

14. 4264. տրանսպորտային այլ նյութեր 600,0

15. 4264. հանր. ծառ. այլ ճանապարհ. պահպանում 200,0

16. 4269. հատուկ նպատակային այլ նյութեր 500,0

17. 4639. դրամաշնորհ 840,0

18. 4729. այլ նպաստներ 600,0

19. 4891. պահուստային միջոցներ 1096.9,9

| Ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Արտաշես Արշակյան | --------- | --------- | ------- |
| Անդրեասյան Մելքոն | --------- | --------- | --------- |
| Հովհաննիսյան Մարգար | --------- | ---------- | ---------- |
| Ստեփանյան Նելսոն | --------- | ---------- | ---------- |

3. Լսեցին-Լուսաշող համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակցիների թվաքանակի հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի մասին:

Ավագանին որոշում է -հաստատել Լուսաշող համայնքի ղեկավարի աշխատակիցների թվաքանակի և պաշտոնային դրույքաչափերը հետևյալ կարգով՝

| | | |
|---|---|---|
| 1. Համայնքի ղեկավար | 1դրույք | 180000 ՀՀ դրամ |
| 2. Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 դրույք | 125000 ՀՀ դրամ |
| 3. Աշխատակազմի քարտուղար | 1դրույք | 126000 ՀՀ դրամ |
| 4. Առաջատար մասնագետ | 1 դրույք | 125000 ՀՀ դրամ |
| 5. Մշակույթի տան տնօրեն | 0,75 դրույք | 60000 ՀՀ դրամ |
| 6. Հավաքարար | 1 դրույք | 75500 ՀՀ դրամ |

| Ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Արտաշես Արշակյան | --------- | --------- | ------- |
| Անդրեասյան Մելքոն | --------- | --------- | --------- |
| Հովհաննիսյան Մարգար | --------- | ---------- | ---------- |

Ստեփանյան Նելսոն

4. Լուսաշող համայնքի 2018թ․-ի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին հարց։

Ղեկավարվելով «տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով՝

Ավագանին որոշում է՝

Հաստատել Արարատի մարզի Լուսաշող համայնքի 2018թ․-ի տարեկան բյուջեում փոփոխությունը հետևյալ տեսքով՝

4891-պահուստային ֆոնդից 50000(հիսուն)հազար դրամ հատկացնել 4213 հոդվածին, 30(երեսուն)հազար դրամ հատկացնել 4111 հոդվածին, 30(երեսուն)հազար դրամ հատկացնել 4251 հոդվածին,243.0 հազար դրամ հատկացնել 4823 հոդվածին պարտադիր վճարներ։

| Ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
| --- | --- | --- | --- |
| Արտաշես Արշակյան | | | |
| Անդրեասյան Մելքոն | | | |
| Հովհաննիսյան Մարգար | | | |
| Ստեփանյան Նելսոն | | | |

ԼՈՒՍԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՍԱՖԱՐՅԱՆ